ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3
ԲԷՑ-ԲՄԱՊՁԲ-17/30 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Ք. Երևան 21.07.2017թ.

ժամը 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ ԳՊ/ԳԱՊ գնահատման պատասխանատու

Հարություն Գևորգյան - Մատակարարման բաժնի պետ

Անդամներ՝ ԳՊ/ԲԱ- բացող անձնակազմ

Դավիթ Գասպարյան - Մատակարարման բաժնի մասնագետ

Հայկ Հակոբյան - Մատակարարման բաժնի մասնագետ

Անդամներ՝ ԳՊ/ԳԱ- գնահատող անձնակազմ

Դավիթ Հարությունյան - Տրանսպորտի ծառայության պետ

Արշակ Պետրոսյան - Տրանսպորտի ծառայության պետի տեղակալ

Հանձնաժողովի քարտուղար՝

Ռոմեո Ալբերտյան - Մատակարարման բաժնի պետի տեղակալ

Հայտերի բացման մասին

(Հ. Գևորգյան)

1. **Հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.**

1.1 «Կալուգագլավսնաբ» ԲԸ՝ 21.07.2017թ., իրավաբանական հասցե՝ ՌԴ, ք. Կալուգա, Ազարովսկայա 2 փող.

2. **Տվյալներ՝ ծրարը կազմելու և ներկայացնելու հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության մասին.**

2.1 Մասնակցի կողմից ներկայացված ծրարը կազմված է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

3. **Տվյալներ՝ բացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

3.1 Մասնակցի ներկայացրած հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

4. **Տվյալներ՝ մասնակցի ներկայացրած փաստաթղթերի համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին.**

4.1 Մասնակցի ներկայացրած փաստաթղթերի համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին գնահատել բավարար:

5. **Մասնակցների առաջարկած գինը.**

5.1«Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկներ է ներկայացրել1 մասնակից.

«Կալուգագլավսնաբ» ԲԸ-ի գնային առաջարկ - 47 600 ԱՄՆ դոլար

5.2 Մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հաշվարկները ճիշտ են:

5.3 Մասնակիցը հանդիսանում է Ռուսաստանի դաշնության ռեզիդենտ:

6. **Ներկայացված գնային առաջարկների հիման վրա ԲԷՑ-ԲՄԱՊՁԲ-17/30 ծածկագրով բաց մրցույթ ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի մասին.**

6.1 Գնման ընթացակարգի 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Կալուգագլավսնաբ» ԲԸ-ին:

6.2 Համակարգի միջոցով ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել հայտով առաջարկված ապրանքի ամբողջական նկարագիրը և որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

7. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

7.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը գումարել «Կալուգագլավսնաբ» ԲԸ-ի կողմից համապատասխան փաստաթղթերը ներկայացնելու օրվանից հաշված հաջորդ աշխատանքային օրը ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ ԳՊ/ԳԱՊ գնահատման պատասխանատու

Հարություն Գևորգյան

Անդամներ՝ ԳՊ/ԲԱ- բացող անձնակազմ

Դավիթ Գասպարյան

Հայկ Հակոբյան

Անդամներ՝ ԳՊ/ԳԱ- գնահատող անձնակազմ

Դավիթ Հարությունյան

Արշակ Պետրոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Ռոմեո Ալբերտյան